10/187

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 13 » 08 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0145-21

Ձեռնարկողը՝ ***«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ***
Ք. Երևան, փ. Զ. Անդրանիկի 1

Գործունեությունը՝ ***«Մուսալեռ» 220կՎ օդային գծի միացում «Երևան ՋԷԿ» 220/110կՎ ենթակայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0145- 21

< 13 **>** 08 **2021թ.**

«Մուսալեռ» 220կՎ օդային գծի միացում «Երևան ՋԷԿ» 220/110կՎ ենթակայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Ք, Երևան, Շենգավիթ համայնք

Ներածական մաս. Նախատեսվող գործունեության նպատակն է կառուցել 2.633կմ երկարությամբ «Մուսալեռ» 220կՎ երկշղթա ՕԳ՝ մուտքային-ելքային սխեմայով միացնելով «Երևանի ՋԷԿ» 220/110կՎ ենթակայանին:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցոության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 5-րդ մասի, 3)-րդ կետի գ. ենթակետի՝ դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Լարման տակ գտնվող միաշղթա 220կՎ «Մուսալեռ» ՕԳ-ից մուտք-ելքը դեպի «Երևանի» ՋԷԿ ենթակայան ապահովելու համար նախատեսված է ընդհանուր 11 հատ նոր հենարանների տեղադրում: Միաշղթա 220կՎ «Մուսալեռ» ՕԳ-ի սկզբնամասի N139-141 հենարանների հատվածում կապամոնտաժվի N 140 միջանկյալ հենարանը, և կտեղադրվեն երկու հատ միաշղթա խարսխային հենարաններ՝ N 1 Y220-1+5 և N 1* Y220-1+14, այնուհետև վերոնշյալ միաշղա օդային գծի հատվածները ուղղվում են N 2 Y220-2т+14 երկշղթա հենարան և շարունակվում են որպես երկշղթա գիծ մինչև «Երևան» ՋԷԿ 220/110կՎ ենթակայանում տեղադրվող N 10 У220-2т+14 հենարան՝ 8 հատ երկշղթա հենարանների տեղադրմամբ: Լարման տակ գտնվող 220կՎ ՕԳ միաշղթա հատվածները՝

- N 139 (գոյություն ունեցող)-N 1*-N 2 հենարանների հատվածում երկարությունը կազմում է 449.0մ: N 139-N1* հենարանների 327.0մ թռիչքում նախատեսված է օգտագործել գոյություն ունեցող AC-400/51 տիպի հաղորդալարը և C-70 տիպի շանթապաշտպան ճոպանը (ապամոնտաժվել են N 140 միջանկյալ հենարանի հետ միասին):
- N 141 (գոյություն ունեցող)-N1-N2 հենարանների հատվածը կազմում է 275.0մ: N 141-N 1 հենարանների 165.0մ թռիչքում նախատեսված է օգտագործել գոյություն ունեցող AC 400/51 տիպի հաղորդալարը և C-70 տիպի շանթապաշտպան ճոպանը (ապամոնտաժվել են N 140 միջանկյալ հենարանի հետ միասին):

Հենարանները տեղադրելու և հետագայում տեխնիկական սպասարկում կատարելու նպատակով պետք է կառուցվեն մոտեցման ճանապարհներ, սակայն տեղադրվող No.1, 2, 3, 6 հենարանների մոտ արդեն իսկ առկա են մոտեցման ճանապարհներ, իսկ No.8, 9, 10 հենարանները գտնվում են ԵրՋԷԿ-ի տարածքում (կան մոտեցման ճանապարհներ) և միայն No. 4, 5 և 7 հենարանների համար կկառուցվեն մոտեցման ճանապարհներ:

Հենարանների տեղադրման և գծի անցկացման համար առանձին շինհրապարակներ չեն կառուցվելու՝ որպես շիհրապարակ ծառայելու է հենարանների հարթակները և գծի միջանցք, նվազագույնքի հասցնելով ծառահատումները և բուսածածկի վնասումը:

Շինհրապարակի տեղամասը (ճամբարը) կզբաղեցնի 360քմ. տարածք (լայնությունը 14.4մ է, իսկ երկարությունը՝ 25մ), որի շուրջը կտեղադրվի ժամանակավոր ցանկապատ H=1.6մ բարձրությամբ: Տեղամասի տարածքում կտեղադրվեն ժամանակավոր շինություններ և սարքավորումներ՝ գրասենյակ, ճաշարան, հանդերձարան, ցնցուղարան, շարժական զուգարաններ, լվացարաններ, խմելու ջրի բաքեր, նյութերի և գործիքների պահեստ, բաց պահեստ, աղբի տարաներ, հակահրդեհային վահանակ՝ իր բոլոր պարագաներով, լուսարձակներ, տեղեկատվական վահանակ, որտեղ նշված կլինեն շինարար-կապալառուի, պատվիրատուի և ծրագրի վերաբերյալ տեղեկություններ:

Ուղեգծում առկա հատումներն են՝

<u>Անցում 1</u>՝ (N 141-1 հենարանների թռիչքում)

1) 10կՎ ՕԳ

<u>Անցում 2</u>՝ (N 141- N.1 հենարանների թռիչքում)

1) վերգետնյա գազատար

2) 0.4կՎ ՕԳ

Թռիչքների երկարությունները N 139 (գոյություն ունեցող)-N1*-N2 հենարանների հատվածում կազմում է 449.0մ, N 141 (գոյություն ունեցող)- N1-N2 հենարանների հատվածում կազմում է 275.0մ:

<u>Անցում 3</u>՝ (NN2-3 հենարանների թռիչքում)

1) 110կՎ «Նորք» երկշղթա ՕԳ

2) ստորգետնյա ջրատար d=700մմ

Նախագծվող 220կՎ երկշղթա ՕԳ-ն NN2-3 հենարանների թռիչքում անցում է կատարում 110կՎ «Նորք» երկշղթա ՕԳ վրայով: 110կՎ ՕԳ վրա մոնտաժված է OPGW շանթապաշտպան ճոպան, որից պահանջվող ուղղաձիգ 4մ եզրաչափն ապահովելու համար նախատեսված է 110կՎ ՕԳ-ի N16 У110-2+5 տիպի հենարանի ճոպանականգնակի վրա ճոպանն իջեցնել 2մ:

<u>Անցում 4</u>՝ (NN7-8 հենարանների թռիչքում)

1) ոչ բնակելի շինություն

220կՎ երկշղթա ՕԳ-ի ուղեգիծը ԵրՋԷԿ-ի տարածքում անցնում է նախկին 220կՎ ԵԿ-ի դեռևս չապամոնտաժված կոնստրուկցիաների վրայով: Նախատեսված է ապամոնտաժել խանգարող կոնստրուկցիաները NN9-10 հենարանների թռիչքում, իսկ NN 7-8 հենարանների թռիչքում՝ խանգարող շանթարգելը:

<u>Անցում 5</u>՝ (NN8-9 հենարանների թռիչքում)

1) 35կՎ երկշղթա ՕԳ «Մաքուր երկաթ»

NN8-9 հենարանի թռիչքում նախագծվող 220կՎ ՕԳ-ն անցում է կատարում 35կՎ «Մաքուր երկաթ» ՕԳ վրայով: Անցումում օդային գծերի հետ ուղղաձիգ եզրաչափի ապահովման համար, նախատեսված է 35կՎ N2 հենարանի կողքը նոր հենարանի N2* տեղադրում, որի վրա կմոնտաժվի 35կՎ ՕԳ-ի մի շղթան: Գոյություն ունեցող և նոր տեղադրվող հենարանների վրա հաղորդալարերը նախատեսված է մոնտաժել մեկ հարթության վրա:

N8 հենարանի տեղադրման տեղում անցկացվել է ստորգետնյա ջրագիծ (կենցաղային): Ջրագծի երկարատև անջատումից խուսափելու համար նախատեսված է 69.0մ երկարությամբ d=32մմ պոլիվինիլքլորիդե ջրատար խողովակի ապամոնտաժումը և նոր ուղեգծով 72մ երկարությամբ նոր, ստորգետնյա հատվածի կառուցումը, որից հետո կիրականացվի գոյություն ունեցող հատվածի անջատումը:

<u>Անցում 6</u>՝ (NN9-10 հենարանների թռիչքում)

1) Ոչ բնակելի շինություն

2) Էստակադ:

Հենարանների տեղադրման և գծի անցկացման աշխատանքների ընթացքում պահանջվող նյութերի հիմնական տեսակները հետևյալն են՝

- մետաղակոնստրուկցիա (հենարան)՝ У220-1+5, У220-1+14, У220-2т+14, У220-2т+5, П220-2т,
- երկաթբետոնե հիմք,
- հաղորդալար АС-150/24,
- ճոպան С-70,
- ձգող միաշղթա շարան 3хПСД70Е տիպի մեկուսիչներով,
- ձգող միաշղթա շարան 6хПСД70Е տիպի մեկուսիչներով,
- պահող միաշղթա շարան 3хПСД70Е տիպի մեկուսիչներով,
- վիբրացիայի մարիչներ ГПГ-3, 2-13-550,
- ծխնային սեղմակ ПА-4-1,
- ծխնային հեղույսային սեղմակ ПА-6-1,
- СОАС-150-3 միացնող սեղմակ,
- հողակցող՝ կլոր պողպատից d=12մմ,
- պոլիվինիլքլորիդե խողովակ d=32մմ:

Տվյալ տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած բույսեր և կենդանիներ ինչպես նաև դրանց աճելավայրեր կամ ապրելավայրեր չեն արձանագրվել, տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում:

Կառուցվող օդային գծի որոշ հատվածներ անցնելու են ոչ խիտ ծառապատ տարածքներով, և այս տեղամասերում հենարանների հիմքերի տեղադրման և գծի անցկացման նպատակով հնարավոր է հատվի 110 տնկի՝ հացենի, թեղի, փշատենի և 15 հատ տարբեր տեսակի թուփ, սակայն ծառերի ոչ խիտ լինելը շինարար-կապալառուին հնարավորություն է տալիս նվազագույնի հասցնել հատվող, վնասվող ծառերի քանակը:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական մեքենաների կանոնավոր ստուգում և տեխնիկական սպասարկում,
- շինհրապարակի պարբերաբար ջրում աշխատանքային օրվա ընթացքում,
- շինանյութերի և գրունտի ծածկում անջրաթափանց և հողմապաշտպան թաղանթով,
- տեղանքում շինարարական նյութերի և թափոնի բաց այրման արգելում,
- նյութերի փոխադրման ընթացքում բեռնատարների թափքի ծածկում բրեզենտով,
- սորուն նյութերի պատշաճ պահեստավորում և կառավարում՝ փոշու մակարդակը սահմանափակելու նպատակով,
- շինարարական տեխնիկայի և մեքենաների ավելորդ շահագործումից խուսափում,
- տեղանքում աղբամանների տեղադրում,

- պայմանագրի կնքում տեղական կառավարման մարմինների հետ կենցաղային աղբը, շինաղբը և այլ թափոնները հատուկ հատկացված վայրեր տեղափոխելու համար
- մետաղական ջարդոնի, հոսանքալարերի և մալուխի, մեկուսիչների թափոնների տեսակավորում և ժամանակավոր պահեստավորում, այնուհետև տեղափոխում պատվիրատուի բազա և հանձնում:
- ծառահատված տարածքի կանաչապատման աշխատանքների իրականացում,
- բոլոր հատված ծառերի վերաբերյալ գրանցումների կատարում համապատասխան գրանցամատյանում,
- համայնքային հողերում հատված ծառերի բնափայտի հետագա օգտագործման վերաբերյալ համաձայնության ձեռքբերում Երևանի քաղաքապետարանից, համապատասխան վարչական շրջանի ղեկավարությունից,
- բոլոր խախտված տարածքների և մոտեցման ճանապարհների վերականգնում և կանաչապատում,
- շինարարական աշխատանքների իրականացումից խուսափում կենդանիների բազմացման/բնադրման սեզոնին (մարտից-հունիս),
- աշխատողների կողմից որսի և բուսահավաքի իրականացման արգելում:

Պատճառաբանական մաս. Երևան քաղաքի, Շենգավիթ վարչական շրջանի նստավայրում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում նախատեսված միջոցառումների իրականացմանը:
-Իրականացվող աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
- Մինչև նախատեսվող աշխատանքների մեկնարկը անհրաժեշտ է հատվող ծառերի վերաբերյալ տվյալները համաձայնեցնել անտառային կոմիտեի և Երևանի քաղաքապետարանի հետ:
- Աշխատանքների ավարտից հետո ծառահատված տարածքների կանաչապատման աշխատանքների իրականացում,
- Աշխատանքների ավարտից հետո բոլոր խախտված տարածքների և մոտեցման ճանապարհների վերականգնում և կանաչապատում
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության,

ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կողմից ներկայացված «Մուսալեռ» 220կՎ օդային գծի միացում «Երևան ՋԷԿ» 220/110կՎ ենթակայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ Հ. Մեսրոպյան